



ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՉՐՈՒԹԵԱՆ

Կ. Ռ.-ի

ԲԱՆԱՏԵԼՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

(Ужъ скоро стаетъ снѣгъ...).



Կը հայտի ձիւնը, սառուցը շուտով
Կը շողայ ազաս ցեղի միջին,
Կը գայ գարունը նախշուն քեւերով
Կը տայ աշխարհիս համերոյր ա-
ռաջին:

Եւ յոռոյ հաւքի երանը կայտառ
Կը գայ նայելու գեղ ծաղիկներին,
Արեւն էլ վերից կը շողայ պայծառ
Այդ հրաշալի, փառաւոր տօնին:
Որքան քարոնաթիւն եւ անուշ քուրմունք
Կը քերի գարունն մեզ համար իւր հետ,
Որքան սեր ու քաղղ, որքան հիացմունք.
Ինչ շէն է նա, որքան կենսաւետ...

Բայց արդեօք զարնան ամենի՞ս հաւնար
 Կը բերի բերկրանք, բաղդ ու ծաղիկներ.
 Մենք կուրսխանա՞նք հաւսահաւասար.
 Ողջ կը կասարռա՞նք մեր արտի շղճեր:
 — Երբ անուշաբոյր նա իւր զանրիւղից
 Առաս նռներէն շաղ սայ մեզ վերայ,
 Մեզանից մէկը նորա աչերից
 Անկկատելի գոցէ կը մնայ?
 Եւ այդ զրկուածին էլ նա յոյս չի՞ տա,
 Նորա երեսին էլ նա չի՞ ժպտալ.
 Բոյրին կը տա թուրով ծաղիկներ —
 Նորան կը բողբոջ գորկ էլ աննուէր:
 Գոցէ նա՝ իբրեւ հնչիւն սշաղոյ՝
 Կ'անցնի՝ ցնորհի, երազի նման՝
 Եւ մեզնից մէկին կ'անի աշխարհ —
 Կը բռնի մօտով, չի տեսնիլ նորան:

Ո՛հ, այն ժամանակ թող նա չը քափի
 Դառն կշտաւքանք զարնան յետից,
 Նորա ընտրածին թո՛ղ չը նախանձի,
 Իւր արտի խորքում պահելով կսկիծ!
 Ո՛հ, զոր արցունքով թո՛ղ նա աշխարհին
 Իւր տառապանքը չը շայտնի խաւառ,
 Որ չը խանգարուի՞ զարնան խնդրագին
 Ու հանդիսաւոր այդ տօնը պայծառ:

Թարգմ. Յարութիւն Թումանեանց

